

ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N

__ . __ . 2020 թ.

ք. Երևան

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), դեկլարավելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է Castles VEGA 3000 մոդելի հսկիչ-դրամարկղային մեքենա (այսուհետ՝ ՀԴՄ) քանակությամբ __ (____) միավոր՝ __ սերիական համարով/համարներով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. ՀԴՄ գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

2.2. Վճարումը կատարվում է Վաճառողի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

2.3. Վճարումը կատարվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ի պայմանների:

3. Հսկիչ-դրամարկղային մեքենայի փոխանցում

3.1. ՀԴՄ-ն Գնորդին է փոխանցվում է Հանձնման-Ընդունման ակտի հիման վրա:

3.2. ՀԴՄ հետ միասին Գնորդին է հանձնվում լիցքավորման լարը, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը (հավաստագրի պատճենը, շահագործման վերաբերյալ հրահանգ, երաշխիքային կտրոնը:

3.3. Վաճառողը երաշխավորում է, որ ՀԴՄ-ն սարքին վիճակում է, գերծ է թերություններից և համապատասխանում է ՀՀ Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1318-Ն որոշմանը:

3.4. Սարքավորման սեփականության իրավունքը Գնորդին է փոխանցում Պայմանագրի 2.1. կետում սահմանված գինն ամբողջությամբ Վաճառողին փոխանցած լինելու դեպքում:

4. Ապրանքի երաշխիքային ժամկետը

4.1. Ապրանքի երաշխիքային ժամկետը 12 (տասներկու) ամիս է:

4.2. Երաշխիքային ժամկետը սկսում է հոսել ապրանքը Գնորդին հանձնելու պահից:

4.3. Եթե Գնորդը, Վաճառողից կախված հանգամանքներով, զրկված է պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետում ապրանքն օգտագործելու հնարավորությունից, երաշխիքային ժամկետն սկսվում է Վաճառողի կողմից համապատասխան հանգամանքները վերացնելուց հետո:

4.4. Երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում ապրանքը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված թերությունների պատճառով՝ վաճառողին, սահմանված կարգով, ապրանքի թերությունների մասին ծանուցելու պայմանով:

4.5. Վաճառողը պարտավորվում է երաշխիքային ժամանակահատվածում ՀԴՄ անսարքությունների, ինչպես նաև թաքնված թերությունների հայտնաբերման դեպքում իր հաշվին վերանորոգել անսարք սարքավորումները կամ փոխարինել դրանք (եթե վերանորոգումը հնարավոր չէ):

4.6. Երաշխիքը չի տարածվում ապրանքի կոմպլեկտավորող տարրերի, այդ թվում՝ մարտկոցի, էլեկտրամատակարարման սնուցիչի, նաև սարքավորման հետ կապակցված այլ ապրանքների վրա:

4.7. Գնորդը կորցնում է երաշխիքային սպասարկման իրավունքը հետևյալ դեպքերում.

- սարքավորումն ունի կողմնակի միջամտության կամ նորոգման հետքեր՝ չսերտիֆիկացված սպասարկման կենտրոնի կողմից;
- երաշխիքային կնիքների, սերիական համարով պիտակների խախտում արտադրանքի արտաքին կամ ներքին մասում;
- առկա է մեխանիկական վնասվածք;
- վնասվածքը պայմանավորված է օտարոտի նյութերի, առարկաների, հեղուկների, միջատների ներթափանցմամբ;
- վնասվածքը պայմանավորված է ոչ ստանդարտ կամ սարքավորման համատեղելիության հետ չփորձարկված սարքերի օգտագործմամբ, որոնք աշխատում են կամ միացված են սարքավորման հետ միասին;
- Պայմանագրի 7.1 կետում թվարկված ֆորս մաժորային հանգամանքների հետևանքով պատճառած վնասի դեպքում;
- էլեկտրաէներգիայի, հեռահաղորդակցման և մալուխային ցանցերի պարամետրերի պետական չափանիշներին չհամապատասխանելու և արտաքին այլ գործոնների (կլիմայական և այլ) հետևանքով պատճառված վնասի դեպքում;
- ոչ ստանդարտ սպառման պարագաների, մաքրող նյութերի օգտագործման հետևանքով պատճառված վնասի դեպքում;
- ոչ պատշաճ շարժական մոդուլների օգտագործման դեպքում:

5. Կողմերի իրավունքները և պարտականությունները

5.1. Վաճառողը պարտավոր է.

5.1.1. Գնորդին փոխանցել համապատասխան որակի սարքավորումներ, համապատասխան փաթեթավորման մեջ և սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով,

5.1.2. ապրանքը հանձնելու հետ միաժամանակ գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը (հավաստագրի պատճենը, շահագործման վերաբերյալ հրահանգ, երաշխիքային կտրոնը),

5.1.3. սարքավորումները գնորդին փոխանցել երրորդ անձանց իրավունքներից ազատ:

5.1.4. ընդունել սարքավորումներ, որոնք ունեն թաքնված թերություններ և փոխարինել դրանք նմանատիպ սարքավորումներով:

5.2. Վաճառողն իրավունք ունի.

5.2.1. պահանջել սարքավորումների համար ժամանակին և ամբողջական վճարում.

5.2.2. արգելափակել ՀԴՄ սարքի աշխատանքը վճարումները սահմանված ժամկետից ավելի քան 5 (հինգ) աշխատանքային օր ուշացնելու դեպքում:

5.2.3. Հսկիչ-դրամարկղային մեքենայով կատարված գործարքների տվյալները հավաքագրել՝ հետագայում Գնորդին ծառայություններ մատուցելու նպատակով:

5.3. Գնորդը պարտավոր է.

5.3.1. սարքավորումների համար վճարումը կատարել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում,

5.4. Գնորդն իրավունք ունի.

5.4.1. սարքավորումներ փոխանցելիս պահանջել ստուգել դրա հատկությունները կամ օգտագործման ցուցադրումը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Հավելված 2-ով սահմանված ժամկետները խախտելու դեպքում Գնորդի նկատմամբ հաշվարկվում են տույժեր կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.1 %-ի չափով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

9.2. Պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից կամ օֆերտան ակցեպտ անելու միջոցով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9.3. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի վավերապայմանները

Վաճառող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Վարդանանց 2-րդ փակ., 8

Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023

Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am

Հեռ. +374 60 50-50-70

Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 15100019230300

ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Գնորդ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Գործ. հասցե՝

ք. _____, _____

Էլ.հասցե _____

Հեռ.՝ _____

Բանկ՝ _____

Հ/Հ՝ _____

ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՊԱՌԻԿ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Վաճառողը հանձնեց, իսկ Գնորդն ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով _____ (____) միավորի չափով: ՀԴՄ հետ միասին Գնորդին հանձնվեց նաև _____:

Վաճառող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Գնորդ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Գործունեության հասցե՝
ք. _____, _____
Էլ.հասցե _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

Հավելված 2
«_» _ 20_ թ. № __

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՊԱՌԻԿ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՀԵՏԱԳԱ ԳՆՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

__ . __ . 2020 թ.

ք. Երևան

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից

և _____, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Պայմանագրի 1.2 կետում նշված գույքը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել Castles VEGA 3000 մոդելի հսկիչ-դրամարկղային մեքենա, այսուհետ՝ «Գույք»:

1.3. Գույքի հետ միասին Վարձակալին է հանձնվում նաև լիցքավորման լարը:

1.4. Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին:

1.5. Գույքը Վարձակալին է հանձնվում Հանձնման-Ընդունման ակտը ստորագրելու պահին:

1.6. Կողմերը գալիս են համաձայնության, որ Պայմանագրի ժամկետի ավարտին կամ դրա լրանալուց առաջ Վարձակալը իրավունք է ստանում ձեռք բերել սույն Պայմանագրի առարկան հանդիսացող սարքավորումները որպես սարքավորումների ընդհանուր արժեք որոշված գնի և Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում վճարված վարձավճարի վերահաշվարկված տարբերության գնով:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1. Վարձավճարը կազմում է ամսական 20000 (Քսան հազար) ՀՀ դրամ:

2.2. Վարձավճարը վճարվում է ՎԱՐՁԱՏՈՒԻ կողմից հարկային հաշիվ դուրս գրելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Վարձատուի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

3. Պայմանագրի գործողության ժամկետը

3.1. Սույն Պայմանագիրը կնքվում է __ (____) ____ ժամկետով: Կողմերի նախաձեռնությամբ չլուծվելու դեպքում պայմանագրի գործողությունը երկարաձգվում է նույն ժամկետով և պայմաններով, համաձայնագիր կազմելու միջոցով:

3.2. Պայմանագրի լուծման դեպքում կազմվում է սարքի Վերադարձման ակտ, սարքի վերաբերյալ ցանկացած թերություն արձանագրվում է Վերադարձման ակտում:

4. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4.1. Վարձատուն իրավունք ունի՝

4.1.1 Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան,

4.1.2 Վարձակալի կողմից վարձավճարի վճարման ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել վճարելու տույժեր,

4.1.3 արգելափակել ՀԴՄ սարքի աշխատանքը վճարումները սահմանված ժամկետից ավելի քան 5 (հինգ) աշխատանքային օր ուշացնելու դեպքում,

4.1.4 պահանջել լուծարելու Պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

4.1.5 Հսկիչ-դրամարկղային մեքենայով կատարված գործարքների տվյալները հավաքագրել՝ հետագայում Գնորդին ծառայություններ մատուցելու նպատակով:

Հսկիչ-դրամարկղային մեքենայով կատարված գործարքների տվյալները հավաքագրել՝ հետագայում Գնորդին ծառայություններ մատուցելու նպատակով:

4.1.6

4.2. Վարձատուն պարտավոր է՝

4.2.1 Գույքը Վարձակալին տրամադրել սույն Պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

4.3. Վարձակալն իրավունք ունի՝

4.3.1 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.5 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

4.4. Վարձակալը պարտավոր է՝

4.4.1 ժամանակին վճարել սույն պայմանագրի 2 կետով սահմանված վճարը,

4.4.2 Գույքը պահպանել պատշաճ վիճակում,

4.4.3 Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Վարձավճարը Պայմանագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գումարի 0.1 տոկոսի չափով:

5.3. Տույժի վճարումը Կողմին չի ազատում իր վրա դրված պարտականությունները կատարելուց:

5.4. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատուին

պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը ևս: Ամսվա ընթացքում մեկ օր օգտագործումը դիտարկվում է որպես ամիս:

5.5. Եթե սարքի տեխնիկական անսարքությունը կամ նրա բաղկացուցիչ մասերի թերությունը/կորուստը առաջացել է Վարձակալի մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասները:

5.6. Գույքի ամբողջությամբ վնասման դեպքում Վարձակալը պարտավորվում է վճարել փոխհատուցում Գույքի արժեքի 80 % (ութսուն) տոկոսի չափով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

6.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

7.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը Գույքն օգտագործել է սույն Պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով, էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը, սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի վճարել վարձավճարը:

7.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝ Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար, Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

8. Վեճերի լուծման կարգը

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

9.2. Պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից կամ օֆերտան ակցեպտ անելու միջոցով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9.3. Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, գրավոր ձևով: Փոփոխությունները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը և Պայմանագրին հակասելու դեպքում գործում են փոփոխություններով որոշված դրույթները:

9.4. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. Կողմերի վավերապայմանները

Վարձատու

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Վարձակալ

Իրավաբանական հասցե՝
ք. _____,
Գործունեության հասցե՝
ք. _____,
Էլ.հասցե _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՀԵՏԱԳԱ ԳՆՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից

և _____, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Վարձատուն հանձնեց, իսկ Վարձակալն ընդունեց Գույքը _____ սերիական համարով __ (____) միավորի չափով, սարքին վիճակում և զերծ թերություններից:

Վարձատու

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Վարձակալ

Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, _____
Գործունեության հասցե՝
ք. _____, _____
Էլ.հասցե _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N

__ . __ . 2020 թ.

ք. Երևան

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

3. Պայմանագրի առարկան

1.2. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է Castles VEGA 3000 մոդելի հսկիչ-դրամարկղային մեքենա (այսուհետ՝ ՀԴՄ) քանակությամբ __ (____) միավոր՝ _____ սերիական համարով/համարներով:

4. Պայմանագրի գինը և վճարման կարգը

4.1. ՀԴՄ գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

4.2. Վճարումը կատարվում է Վաճառողի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

4.3. Վճարումը կատարվում է 100 % (հարյուր տոկոս) կանխավճարով:

3. Հսկիչ-դրամարկղային մեքենայի փոխանցումը

3.5. ՀԴՄ-ն Գնորդին է փոխանցվում է Հանձնման-Ընդունման ակտի հիման վրա:

3.6. ՀԴՄ հետ միասին Գնորդին է հանձնվում լիցքավորման լարը, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը (հավաստագրի պատճենը, շահագործման վերաբերյալ հրահանգ, երաշխիքային կտրոնը):

3.7. Վաճառողը երաշխավորում է, որ ՀԴՄ-ն սարքին վիճակում է, գերծ է թերություններից և համապատասխանում է ՀՀ Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1318-Ն որոշմանը:

3.8. Սարքավորման սեփականությունը, պատահական կորստի և/կամ վնասվելու ռիսկը Գնորդին է փոխանցում հանձնման-ընդունման ակտով սարքավորումը ստանալու պահից:

4. Ապրանքի երաշխիքային ժամկետը

4.8. Ապրանքի երաշխիքային ժամկետը 12 (տասներկու) ամիս է:

4.9. Երաշխիքային ժամկետը սկսում է հոսել ապրանքը Գնորդին հանձնելու պահից:

4.10. Եթե Գնորդը, Վաճառողից կախված հանգամանքներով, զրկված է պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետում ապրանքն օգտագործելու հնարավորությունից, երաշխիքային ժամկետն սկսվում է Վաճառողի կողմից համապատասխան հանգամանքները վերացնելուց հետո:

4.11. Երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակով, որի ընթացքում ապրանքը չի կարող օգտագործվել դրանում հայտնաբերված թերությունների պատճառով՝ վաճառողին, սահմանված կարգով, ապրանքի թերությունների մասին ծանուցելու պայմանով:

4.12. Վաճառողը պարտավորվում է երաշխիքային ժամանակահատվածում ՀԴՄ անսարքությունների, ինչպես նաև թաքնված թերությունների հայտնաբերման դեպքում իր հաշվին վերանորոգել անսարք սարքավորումները կամ փոխարինել դրանք (եթե վերանորոգումը հնարավոր չէ):

4.13. Երաշխիքը չի տարածվում ապրանքի կոմպլեկտավորող տարրերի, այդ թվում՝ մարտկոցի, էլեկտրամատակարարման սնուցիչի, նաև սարքավորման հետ կապակցված այլ ապրանքների վրա:

4.14. Գնորդը կորցնում է երաշխիքային սպասարկման իրավունքը հետևյալ դեպքերում.

- սարքավորումն ունի կողմնակի միջամտության կամ նորոգման հետքեր՝ չսերտիֆիկացված սպասարկման կենտրոնի կողմից;
- երաշխիքային կնիքների, սերիական համարով պիտակների խախտում արտադրանքի արտաքին կամ ներքին մասում;
- առկա է մեխանիկական վնասվածք;
- վնասվածքը պայմանավորված է օտարոտի նյութերի, առարկաների, հեղուկների, միջատների ներթափանցմամբ;
- վնասվածքը պայմանավորված է ոչ ստանդարտ կամ սարքավորման համատեղելիության հետ չփորձարկված սարքերի օգտագործմամբ, որոնք աշխատում են կամ միացված են սարքավորման հետ միասին;
- Պայմանագրի 7.1 կետում թվարկված ֆորս մաժորային հանգամանքների հետևանքով պատճառած վնասի դեպքում;
- էլեկտրաէներգիայի, հեռահաղորդակցման և մալուխային ցանցերի պարամետրերի պետական չափանիշներին չհամապատասխանելու և արտաքին այլ գործոնների (կլիմայական և այլ) հետևանքով պատճառված վնասի դեպքում;
- ոչ ստանդարտ սպառման պարագաների, մաքրող նյութերի օգտագործման հետևանքով պատճառված վնասի դեպքում;
- ոչ պատշաճ շարժական մոդուլների օգտագործման դեպքում:

5. Կողմերի իրավունքները և պարտականությունները

6.1. Վաճառողը պարտավոր է.

6.1.1. Գնորդին փոխանցել համապատասխան որակի սարքավորումներ, համապատասխան փաթեթավորման մեջ և սույն Պայմանագրով նախատեսված պայմաններով,

6.1.2. ապրանքը հանձնելու հետ միաժամանակ Գնորդին հանձնել դրա պատկանելիքները, ինչպես նաև դրան վերաբերող փաստաթղթերը (հավաստագրի պատճենը, շահագործման վերաբերյալ հրահանգ, երաշխիքային կտրոնը),

6.1.3. սարքավորումները Գնորդին փոխանցել երրորդ անձանց իրավունքներից ազատ,

6.1.4. ընդունել սարքավորումներ, որոնք ունեն թաքնված թերություններ և փոխարինել դրանք նմանատիպ սարքավորումներով:

6.2. Վաճառողն իրավունք ունի.

6.2.1. պահանջել սարքավորումների համար ժամանակին և ամբողջական վճարում.

6.2.2. Հսկիչ-դրամարկղային մեքենայով կատարված գործարքների տվյալները հավաքագրել՝ հետագայում Գնորդին ծառայություններ մատուցելու նպատակով:

6.3. Գնորդը պարտավոր է.

6.3.1. Սարքավորումների համար վճարումը կատարել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում,

6.4. Գնորդն իրավունք ունի.

6.4.1. Սարքավորումներ փոխանցելիս պահանջել ստուգել դրա հատկությունները կամ օգտագործման ցուցադրումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

10.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. Վեճերի լուծման կարգը

12.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Եզրափակիչ դրույթներ

13.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է Պայմանագրի գինը Վաճառողի բանկային հաշվեհամարին փոխանցելու պահից և գործում է մինչև Կողմերի՝ պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

13.2. Պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից կամ օֆերտան ակցեպտ անելու միջոցով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

13.3. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Կողմերի վավերապայմանները

Վաճառող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,

Վարդանանց 2-րդ փակ., 8

Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023

Էլ.հասցե՝ contact@inntech.am,

info@inntech.am

Հեռ. +374 60 50-50-70

Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հ/Հ 15100019230300

ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Գնորդ

Իրավաբանական հասցե՝

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան, _____

Գործունեության հասցե՝

ք. _____, _____

Էլ.հասցե _____

Հեռ.՝ _____

Բանկ՝ _____

Հ/Հ՝ _____

ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից

և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Վաճառողը հանձնեց, իսկ Գնորդն ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով _____ (____) միավորի չափով: ՀԴՄ հետ միասին Գնորդին հանձնվեց նաև լիցքավորման լարը և _____ համարի քարտը:

Վաճառող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Գնորդ

Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, _____
Գործունեության հասցե՝
ք. _____, _____
Էլ.հասցե _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

**ՀՄԿԻԶ-ԴՐԱՍԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N**

__ . __ . 2020 թ.
Երևան

Ք.

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

8. Պայմանագրի առարկան

8.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները թվով ____ (_____) սարքավորումների համար, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

8.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

- ՀԴՄ-ների ցանցին միացում,
- ՀԴՄ աշխատանքի ստուգում և դրա գործարկում,
- ՀԴՄ-ների ընթացիկ սպասարկումը և վերանորոգումը,
- Շարժական կապի կամ ֆիքսված հեռախոսակապի օպերատորների (այսուհետ՝ Կապի Օպերատոր) միջոցով ՀԴՄ սարքերի կապի միջոցի ապահովում՝ դրամական հաշվարկների և պլաստիկ քարտերով, այդ թվում վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով իրականացված վճարումների մասին տեղեկատվության ուղարկումն ապահովելու համար,
- Պատվիրատուին ՀԴՄ-ների շահագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը:

9. Պայմանագրի գինը և վճարման կարգը

9.1. Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման դիմաց Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողի կողմից ՀԴՄ-ների ընթացիկ սպասարկման արժեքը համաձայն Հավելված 2-ի :

9.2. Վճարումը կատարվում է Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

9.3. Սպասարկման արժեքը կարող է փոփոխվել ըստ Պատվիրատուի իրացումից հասույթի:

9.4. Սպասարկման արժեքը կարող է ներառել տրանսպորտային ծախսեր:

10. Պայմանագրի գործողության ժամկետը

10.1. Սույն Պայմանագիրը կնքվում է 1 (մեկ) տարի ժամկետով: Կողմերի նախաձեռնությամբ չլուծվելու դեպքում Պայմանագրի գործողությունը երկարաձգվում է նույն ժամկետով և պայմաններով:

11. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

11.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

11.1.1. Կատարողից պահանջել Պայմանագրով սահմանված Ծառայությունների որակյալ և ամբողջական մատուցում,

11.1.2. Կատարողից պահանջել վերացնել Ծառայությունների մատուցման ընթացքում նրա մեղքով առաջացած թերությունները,

11.1.3. հրաժարվել Ծառայություններից՝ այդ մասին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելով Կատարողին:

11.2. Պատվիրատուն պարտավոր է՝

11.2.1. Պայմանագրով սահմանված կարգով վճարել Ծառայությունների դիմաց,

11.2.2. անվնաս պահպանել ՀԴՄ-ների կապարակնիքները և պաշտպանիչ այլ միջոցները,

11.2.3. բացառել ՀԴՄ-ն քանդելը, դրա ապարատային մաս մուտք գործելը, ՀԴՄ-ների աշխատանքային ծրագրում փոփոխություններ կատարելը կամ դրանց փորձը,

11.2.4. հետևել Կատարողի կողմից տրված խորհուրդներին՝ ՀԴՄ-ների անխափան աշխատանքն ապահովելու համար,

11.2.5. ՀԴՄ-ների աշխատանքի թերություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ տեղեկացնել Կատարողին,

11.2.6. չթույլատրել կողմնակի անձանց շահագործել, սպասարկել կամ վերանորոգել ՀԴՄ-ները,

11.2.7. ապահովել անհրաժեշտ պայմաններ Կատարողի կողմից Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման համար,

11.2.8. ՀԴՄ-ները շահագործումից հանելու դեպքում առնվազն 5 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել Կատարողին:

11.3. Կատարողն իրավունք ունի՝

11.3.1. Պատվիրատուից պահանջել վճարել մատուցվող Ծառայությունների դիմաց՝ Պայմանագրով սահմանված չափով և կարգով,

11.3.2. Պատվիրատուի կողմից Պայմանագրով սահմանված կարգով և չափով վճարում չկատարելու դեպքում դադարեցնել Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցումը,

11.3.3. կասեցնել (ամբողջությամբ կամ մասնակիորեն) Ծառայությունների մատուցումը Պատվիրատուի կողմից Պայմանագրի այն դրույթները խախտելու դեպքում, որոնց կատարումից կամ պատշաճ կատարումից է կախված իր պարտավորությունների

պատշաճ կատարումը: Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում Կատարողն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Պատվիրատուին:

11.4. Կատարողը պարտավոր է՝

11.4.1. Ծառայությունները մատուցել պատշաճ կարգով և որակով,

11.4.2. ՀԴՄ-ները կիրառության մեջ դնելուց առաջ ստուգել դրանց աշխատանքը, իրականացնել ՀԴՄ-ների ընթացիկ, այդ թվում՝ ծրագրային սպասարկումը,

11.4.3. աջակցել Պատվիրատուի ՀԴՄ օգտագործող աշխատակիցներին (ադմինիստրատորներ, գանձապահներ) ՀԴՄ աշխատանքի սկզբունքների և մեթոդների ուսուցման հարցում,

11.4.4. Կապի Օպերատորի հետ համատեղ իրականացնել ցանցային կապի սպասարկման և աշխատունակության ապահովմանն ուղղված աշխատանքներ՝ դրամական հաշվարկների և պլաստիկ քարտերով, այդ թվում՝ վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով իրականացված վճարումների մասին տեղեկատվությունը փոխանցելու համար,

11.4.5. ՀԴՄ-ի անսարքությունը վերացնելուց հետո Կատարողի մեղքով առաջացած թերությունները ողջամիտ ժամկետում վերացնել Կատարողի հաշվին՝ առանց լրացուցիչ վարձավճարի,

11.4.6. ՀԴՄ-ի վերանորոգման աշխատանքների ժամանակահատվածի համար Պատվիրատուի դիմելու դեպքում ժամանակավորապես Պատվիրատուին անհատույց տրամադրել ՀԴՄ,

11.4.7. Պատվիրատուի կողմից ՀԴՄ-ի անսարքության վերաբերյալ Կատարողին հայտնելուց հետո ապահովել ՀԴՄ-ի անսարքության վերացումը Երևան քաղաքի տարածքում՝ առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարզերում՝ առավելագույն 3 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետները ենթակա են փոփոխության այն դեպքում, երբ առաջացած անսարքության վերացման համար օբյեկտիվորեն անհրաժեշտ է ավելի տևական ժամանակ:

12. ՀԴՄ-ի վերանորոգումը

12.1. ՀԴՄ-ի երաշխիքային ողջ ժամկետի ընթացքում դրա վերանորոգումը Կատարողի կողմից իրականացվում է առանց հավելյալ վճարումների՝ սարքի բաղկացուցիչ մասերի ձեռք բերման համար:

12.2. ՀԴՄ-ի երաշխիքային սպասարկումը չի ներառում սարքի մարտկոցի, էլեկտրամատակարարման սնուցիչի և տպիչի նորոգումը: Երաշխիքային սպասարկման ենթակա չեն այն սարքավորումները, որոնց վրա բացակայում են կամ վնասված են կնիքները կամ պաշտպանիչ այլ միջոցները, ինչպես նաև եթե թերությունները առաջացել են հետևյալ դեպքերում.

12.2.1. ՀԴՄ-ի և դրա պահեստամասերի սխալ շահագործման, անփույթ վերաբերմունքի կամ պատահարի առաջացած մեխանիկական, ջերմային և այլ արտաքին և ներքին վնասվածքների առկայության դեպքում,

12.2.2. սխալ տեղադրման, տեղափոխման պատճառով,

12.2.3. սարքի մեջ օտար մարմնի, հեղուկների առկայության դեպքում,

12.2.4. սարքավորման նույնականացման տվյալների հեռացման կամ աղավաղման դեպքում,

12.2.5. սարքի ինքնուրույն վերանորոգման կամ ձևափոխությունների փորձերի դեպքում:

12.3. Երաշխիքային սպասարկում չի իրականացվում երաշխիքային կտրոնի բացակայության դեպքում:

12.4. Կատարողի կողմից Պատվիրատուի ՀԴՄ-ի ոչերաշխիքային վերանորոգման համար Կատարողի կողմից օգտագործված նյութերի կամ պահեստամասերի արժեքը վճարվում է առանձին՝ Պայմանագրով սահմանված կարգով:

13. Կողմերի պատասխանատվությունը

13.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.2. Սպասարկման վճարը Պայմանագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ պայմանագրի գումարի 0.1 տոկոսի չափով:

13.3. Տույժի վճարումը Կողմին չի ազատում իր վրա դրված պարտականությունները կատարելուց:

14. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

14.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

15. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

15.1. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ առնվազն 30 (երեսուն) օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին:

15.2. Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին մինչև լուծման պահը ծագած պարտավորությունների կատարումից:

15.3. Պայմանագրի գործողության ընթացքում սպասարկվող ՀԴՄ-ն այլ ՀՎՀՀ-ով գրանցման դեպքում սվյալ ՀԴՄ-ի մասով Պայմանագրի գործողությունը դադարում է:

16. Վեճերի լուծման կարգը

16.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Եզրափակիչ դրույթներ

17.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

17.2. Պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

17.3. Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, գրավոր ձևով: Փոփոխությունները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը և Պայմանագրին հակասելու դեպքում գործում են փոփոխություններով որոշված դրույթները:

17.4. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

18. Կողմերի վավերապայմանները

Պատվիրատու

Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, _____
Գործունեության հասցե՝
ք. Երևան, _____
Էլ.հասցե՝ _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

Կատարող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5,
0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

«_» _ 20_ թ. № _

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Պատվիրատուն հանձնեց, իսկ Կատարողը ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով __ (____) միավորի չափով: ՀԴՄ հետ միասին Գնորդին __ հանձնվեց նաև լիցքավորման լարը և _____ համարի քարտը:

Պատվիրատու

Կատարող

« ԻՆՆԹԵՔ »
ՄՊԸ

«_» _ 20_ թ. № _

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Պատվիրատուն հանձնեց, իսկ Կատարողը ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով __ (____) միավորի չափով: ՀԴՄ հետ միասին Գնորդին __ հանձնվեց նաև լիցքավորման լարը և _____ համարի քարտը:

Պատվիրատու

Կատարող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Պատվիրատուն հանձնեց, իսկ Կատարողը ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով __ (____) միավորի չափով: Կատարողը ժամանակավոր տիրապետման հանձնեց, իսկ Պատվիրատուն ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով __ (____) միավորի չափով:

Պատվիրատու

Կատարող

« ԻՆՆԹԵՔ »
ՍՊԸ

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Պատվիրատուն հանձնեց, իսկ Կատարողը ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով __ (____) միավորի չափով: Կատարողը ժամանակավոր տիրապետման

հանձնեց, իսկ Պատվիրատուն ընդունեց ՀԴՄ-ն _____ սերիական համարով
— (____) միավորի չափով :

Պատվիրատու

Կատարող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Հավելված 2

Կից ՀՍԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

| Հարկ վճարողներ (դասակարգումն՝ ըստ իրացումից հասույթի ցուցանիշի) | Մեկ ՀԴՄ-ի սպասարկման ամսական գինը (ներառյալ ԱԱՀ-ն) |
|--|--|
| նախորդ տարվա արդյունքներով 500.0 մլն ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար | 3600 ՀՀ դրամ |
| նախորդ տարվա արդյունքներով 115.0 ՀՀ մլն դրամից մինչև 500 մլն դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար | 3000 ՀՀ դրամ |
| նախորդ տարվա արդյունքներով մինչև 115.0 մլն ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ- ն) իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար (բացառությամբ գյուղերում, այդ թվում՝ սահմանամերձ գյուղերում հաշվառված և փաստացի գործունեություն իրականացնող հարկ վճարողների) | 1200 ՀՀ դրամ |
| սահմանամերձ գյուղերում հաշվառված և սահմանամերձ գյուղերում փաստացի գործունեություն իրականացնող հարկ վճարողների համար սահմանամերձ գյուղերում տեղադրված ՀԴՄ-ների համար | անվճար |

Պատվիրատու

Կատարող

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

**ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N**

— . — . 2020 թ.

ք. Երևան

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից

և _____, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս

_____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

19. Պայմանագրի առարկան

1.7. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Պայմանագրի 1.2 կետում նշված գույքը:

1.8. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել Castles VEGA 3000 մոդելի հսկիչ-դրամարկղային մեքենա, այսուհետ՝ «Գույք»:

1.9. Գույքի հետ միասին Վարձակալին է հանձնվում նաև լիցքավորման լարը:

1.10. Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին:

1.11. Գույքը Վարձակալին է հանձնվում Հանձնման-Ընդունման ակտը ստորագրելու պահին:

20. Պայմանագրի գինը և վճարման կարգը

20.1. Վարձավճարը կազմում է՝

3-10 օր՝ օրական 3000

11-20 օր՝ օրական 2000

21-30 օր՝ օրական 1500

1-2 ամիս՝ ամսական 30.000

3-6 ամիս՝ ամսական 20.000 ՀՀ դրամ:

20.2. Փաթեթների միջև փոփոխությունները հնարավոր է իրականացնել www.inntech.am էլեկտրոնային համակարգում հաճախորդի գրասենյակի միջոցով:

20.3. Վարձակալի կողմից տրվում է կանխավճար փաթեթի արժեքի նվազագույնի չափով:

20.4. Վարձավճարը վճարվում է Վարձատուի կողմից հարկային հաշիվ դուրս գրելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Վարձատուի բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով:

21. Պայմանագրի գործողության ժամկետը

21.1. Սույն Պայմանագիրը կնքվում է __ (____) ____ ժամկետով: Կողմերի նախաձեռնությամբ չլուծվելու դեպքում պայմանագրի գործողությունը երկարաձգվում է նույն ժամկետով և պայմաններով, համաձայնագիր կազմելու միջոցով:

21.2. Պայմանագրի լուծման դեպքում կազմվում է սարքի Վերադարձման ակտ, սարքի վերաբերյալ ցանկացած թերություն արձանագրվում է Վերադարձման ակտում:

22. Կողմերի իրավունքները և պարտականությունները

22.1. Վարձատուն իրավունք ունի՝

4.1.7 Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան,

4.1.8 Վարձակալի կողմից վարձավճարի վճարման ժամկետների խախտման դեպքում նրանից պահանջել վճարելու տույժեր,

4.1.9 արգելափակել ՀԴՄ սարքի աշխատանքը վճարումները սահմանված ժամկետից ավելի քան 5 (հինգ) աշխատանքային օր ուշացնելու դեպքում,

4.1.10 պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

22.2. Վարձատուն պարտավոր է՝

4.2.2 Գույքը Վարձակալին տրամադրել սույն Պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

22.3. Վարձակալն իրավունք ունի՝

4.3.2 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի 1.5 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

22.4. Վարձակալը պարտավոր է՝

4.4.4 ժամանակին վճարել սույն պայմանագրի 2 կետով սահմանված վճարը,

4.4.5 Գույքը պահպանել պատշաճ վիճակում,

4.4.6 Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

23. Կողմերի պատասխանատվությունը

23.1. Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

23.2. Վարձավճարը Պայմանագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում Վարձակալը Վարձատուին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գումարի 0.1 տոկոսի չափով:

23.3. Տույժի վճարումը Կողմին չի ազատում իր վրա դրված պարտականությունները կատարելուց:

23.4. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարեցնուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատունը իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում Վարձատունին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը ևս:

23.5. Եթե սարքի տեխնիկական անսարքությունը կամ նրա բաղկացուցիչ մասերի թերությունը/կորուստը առաջացել է Վարձակալի մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասները:

23.6. Գույքի ամբողջությամբ վնասման դեպքում Վարձակալը պարտավորվում է վճարել փոխհատուցում Գույքի արժեքի 80 % (ութսուն) տոկոսի չափով:

24. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

24.1. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող նախատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների դադարեցումը, պետական մարմինների ակտը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

25. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

25.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով, էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը, սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի վճարել վարձավճարը:

25.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝ Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար, Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

8. Վեճերի լուծման կարգը

8.2. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

10.2. Պայմանագիրը կազմվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10.3. Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, գրավոր ձևով: Փոփոխությունները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը և Պայմանագրին հակասելու դեպքում գործում են փոփոխություններով որոշված դրույթները:

10.4. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Կողմերի վավերապայմանները

Վարձատու

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ 15100019230300
ՀՎՀՀ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Վարձակալ

Իրավաբանական հասցե՝
ք. _____,
Գործունեության հասցե՝
ք. _____,
Էլ.հասցե _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝

«_» _ 20_ թ-ին կնքված N__
ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

«ԻՆՆԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Դիանա Նալբանդյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից

և _____, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս _____, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ), կազմեցին սույն Հանձնման-Ընդունման ակտը հետևյալի մասին.

Վարձատուն հանձնեց, իսկ Վարձակալն ընդունեց Գույքը _____ սերիական համարով __ (____) միավորի չափով, սարքին վիճակում և զերծ թերություններից:

Վարձատու

« ԻՆՆԹԵՔ » ՍՊԸ

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Վարդանանց 2-րդ փակ., 8
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սևանի 5, 0023
Էլ.հասցե՝ contact@inntech.am,
info@inntech.am
Հեռ. +374 60 50-50-70
Բանկ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Հ/Հ՝ 15100019230300
ՀՎՀՀ՝ 02668665

Տնօրեն՝ Դիանա Նալբանդյան

Վարձակալ

Իրավաբանական հասցե՝
ք. Երևան, _____
Գործունեության հասցե՝
ք. _____, _____
Էլ.հասցե՝ _____
Հեռ.՝ _____
Բանկ՝ _____
Հ/Հ՝ _____
ՀՎՀՀ՝ _____

Տնօրեն՝
